Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնը Վրաստանում գործող մյուս հայ հասարակական կազմակերպությունների
հետ
համատեղ
պատրաստվում
է
հավուր
պատշաճի
նշանավորել
Հայոց
Մեծ
Ցեղասպանության
98-
րդ
տարելիցը
: «
Հայարտուն
»

կենտրոնի
նախաձեռնությամբ
ապրիլի
24-
ին
ընդառաջ
,
ամեն
կիրակի
, «
Հայարտուն
»
կենտրոնի
Գալուստ
Գյուլբենկյան
սրահում
կցուցադրվեն
Հայոց
Մեծ
Եղեռնին
նվիրված
վավերագրական
և
գեղարվեստական
ֆիլմեր
:

Այդ շարքը մեկնարկեց ապրիլի 7-ից ռեժիսոր Էնդրյու Գոլբերգի «Հայոց ցեղասպանություն
»
վավերագրական
ֆիլմի
ցուցադրմամբ
:

Ֆիլմերի ցուցադրումը կշարունակվի ամեն կիրակի, ժամը 14.00-ին: Մուտքն ազատ է: